

ԴՐԱՄԻ ՍԻՌՈՅՆ ՄԻ՛ ԾԱԾԿԵՐ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Յիսուսի յարութենէն ետք անոր գերեզմանին պահապաններէն ունանք Երուսաղէմ գաղին եւ ինչ որ պատահած էր պատմեցին աւագ քահանաներուն: Աւագ քահանաներն ու երէցները խորհրդակցելէ ետք, դրամ տուին պահապաններուն եւ պատուիրեցին անոնց ըսել, թէ. «Աշակերտները գիշերով եկան եւ գողցան մարմինը» երբ իրենք քնացած էին (Մտթ. 28.11-13): Միրելիներ, մենք ալ երբեմն կաշառք չե՞նք ստանար որպէսզի ստենք: Կաշառքը միայն դրամը չէ. մէկը կրնայ կաշառուիլ խոստումով մը, աթոռով, փառքով, եւայլն: Որքա՞ն մարդիկ կան որոնք շահելու համար բան մը կամ սիրաշահելու համար անձ մը, կը ստեն ու ճշմարտութիւնը կը խեղաթիւրեն: Մենք չըլլանք անոնցմէ:

ՄԵԿ ՏԱՐՈՒՄԸ ԸՆԹԱՅԷՆ ԿԱՐԴԱՆՔ ԱՍԲՈՂՁ ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԸ

ՅՈՒՆՈՒՄ 2020

| | | |
|----|-----------------|------------------|
| 18 | Ծննդոց 43,44,45 | Մատթէոս 12:22-50 |
| 19 | Ծննդոց 46,47,48 | Մատթէոս 13:1-30 |
| 20 | Ծննդոց 49,50 | Մատթէոս 13:31-58 |
| 21 | Ելից 1,2,3 | Մատթէոս 14:1-21 |
| 22 | Ելից 4,5,6 | Մատթէոս 14:22-36 |
| 23 | Ելից 7,8 | Մատթէոս 15:1-20 |
| 24 | Ելից 9,10,11 | Մատթէոս 15:21-39 |

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ԸՄԲԱԾԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- [facebook-ի էջ jerak](#) ճրագ թերթ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Կազմակերպութեամբ Կրօնական ժողովին եւ Ազգային առաջնորդարանի «ԱՅՈ» երիտասարդական յանձնախումբին, ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց եկեղեցոյ մէջ, սուրբ պատարագ պիտի մատուցուի:

Սուրբ պատարագը պիտի երգէ հաւատացեալ ժողովուրդը: Հոգեւոր խորհրդածութիւն պիտի կատարէ Լիբանանի Հայոց առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս:

Նաեւ, ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-9:00, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան – Եռագոյն» սրահին մէջ, Արժ. Տ. Ղեւոնդ քհն. Լոշխաճեան Աստուածաշունչի սերտողութիւն պիտի կատարէ մեր ժողովուրդի գաւակներուն համար:

Միրելի ընթերցող, ճՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:



ԲՈՒ ԽՍՐԷՂ ԽՍ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱԽԻՆՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Սղ.119-105)

ԺԳ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ , 26 ՅՈՒՆՈՒՄ 2020 ԹԻԻ 4

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ Ետայի 58.13-59.7: Բ. Տմ. 4.12-5.10: ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՈՒ 3.13-21

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ 3.13-21

Ոչ ոք երկինք ելաւ բացի Մարդու որդիէն, որ երկինքէն իջաւ եւ երկինքի մէջ է: Եւ ինչպէս Մովսէս պղինձէ օձը բարձրացուց անապատին մէջ, նոյնպէս ալ Մարդու Որդին պէտք է բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ դրկեց ոչ թէ որպէսզի աշխարհը դատապարտէ, այլ՝ որպէսզի աշխարհը փրկէ: Ով որ կը հաւատայ անոր, չի դատապարտուիր. իսկ ով որ չի հաւատար անոր, արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ միածին Որդիին չհաւատալուն համար:

Եւ դատապարտութիւնը այս է. Լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին: Ով որ չար գործ կը կատարէ՝ կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին: Սակայն ով, որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է՝ լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամքին համաձայն գործուած են:

Առաս Քրիստոսի Ծայ՝ քրիստոսեան Կեսք

Ո՛չ միայն դժուար է քրիստոնէական կեանք ապրիլը, այլեւ՝ անկարելի: Անկարելի կ'ըլլայ, եթէ երբեք Քրիստոսի չենք միացած ինչպէս ճիշդ մը ծառին կը միանայ: Առանց Քրիստոսի մենք ոչինչ կրնանք ընել (Յե. 15.5): Իսկ երբ Յիսուսի միացած ըլլանք, ամէն ինչ կրնանք տանիլ շնորհիւ իրեն, որովհետեւ ինքն է որ մեզ կը գորացնէ իր կամքը կատարելու համար (Փլպ. 4.13): Առանց Քրիստոսի օգնութեան, մենք չենք կրնար քրիստոնէական կեանք ապրիլ: Առանց Քրիստոսի Հոգիին, մենք անկարող ենք ապրելու աստուածապաշտութեան կեանք, հոգեւոր կեանք: Ահա թէ ինչու Քրիստոս խոստացաւ Հօրը երթալէ ետք Սուրբ Հոգին դրկել մեզի (Յե. 14.16):

ԵՍԱՅԻ ՍԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԵՆ
58.13- -59.7

Այսպէս կ'ըսէ Տէրը. «Եթէ Շարաֆ օրը, իմ սուրբ օրս, հրաժարիս էու ցանկութիւններդ կատարելէ, եթէ Աստուծոյ նուիրուած Շարաֆ օրը ուրախարար ու նուիրական համարես, եթէ զայն պատուես՝ էու ընթացքդ փոխելով եւ թշնամական խօսքերէ հեռու մնալով, եւ յոյսդ Տիրոջ վրայ դնես, այն ատեն երկրի բարիքները պիտի պարգեւեմ քեզի եւ քեզի պիտի տամ այն ժառանգութիւնը որ էու հօրդ՝ Յակոբի խոստացայ: Ահա ես՝ Տէրս ըսի»:

Միթէ կը կարծէ՞ք, թէ Տէրը ձեզ փրկելու կարողութիւնը չունի՞, կամ փակե՞ց իր ականջը, որպէսզի ձեզ չլսէ: Ոչ: Բայց ձեր մեղքերը պատճառ կ'ըլլան որ իրամատ բացուի ձեր եւ Աստուծոյ միջեւ, այնպէս՝ ինչպէս ձեր անօրէնութիւններուն պատճառով Աստուած երես դարձուց եւ չողորմեցաւ ձեզի: Որովհետեւ ձեր ձեռքերը արիւնով պղծուած են եւ ձեր մատները՝ մեղքերով. ձեր շրթները սուտ խօսեցան, ձեր լեզուները անիրաւութեան գործիք եղան:

Չկայ մէկը, որ արդարութիւնը պաշտպանէ. չկայ մէկը որ իրաւունքով դատ տեսնէ: Դու՛ք ձեր շահերուն համար սուտերու կ'ապաւինիք եւ ուրիշները կը խաբէք. չարութիւն կը յղանաք եւ մեղք կը ծնանիք: Ձեր լարած դաւերը քարերու հակիթներ են, որոնցմէ ուտել ուզողը մահ կը գտնէ, որովհետեւ իժ է անոնց մէջիւնը: Ձեր հիւսած դաւերը սարդի ոտայն են, որոնցմէ հագուստ չ'ըլլեր եւ բանի չեն ծառայեր: Դու՛ք բնաւ չէք կրնար արդարանալ ձեր գործերով, որովհետեւ ձեր գործերը անօրէն գործեր են եւ ձեր ձեռքէն միայն անիրաւութիւն կու գայ: Պատրաստ էք միշտ չարիք գործելու, անմեղ արիւն թափելու չէք վարանիր. միայն մեղաւոր խորհուրդներ կը սնուցանէք եւ ձեր այս ընթացքով կործանումի ու դժբախտութեան պատճառ կ'ըլլաք:



ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԿԸ ՏԻՄՈԹԷՈՍԻՆ
4.12- -5.10

Հաւատացեալներուն օրինակ եղի՛ր խօսքովդ, վարմունքովդ, սիրովդ, հաւատովդ եւ մաքուր կենցաղովդ: Մինչեւ գալս հոգ տա՛ր իրենց՝ Աստուծոյ խօսքէն կարդալով, յորդորելով գիրենք եւ սորվեցնելով: Անփոյթ մի՛ գտնուիր այն շնորհէին նկատմամբ, որ մարգարեական հոգիով քեզի տրուեցաւ, երբ երեցները ձեռք դրին էու վրայ: Այս ըսածներուս մասին խորի՛ք եւ գանձի գործի վերածելու աշխատէ՛ք, որպէսզի ամէն մարդ յայտնապէս տեսնէ էու յառաջդիմութիւնը: Ուշադիր եղի՛ր, թէ դուն քեզի եւ թէ սորվեցուցածիդ, եւ միշտ ալ այդպէս մնա՛ գիտնալով, որ այդ ձեռով ոչ միայն ինքզինքդ կը փրկես, այլ՝ նաեւ բոլոր քեզ լսողները:

Երբեք խստութեամբ մի՛ յանդիմաներ ձեր մէկը, այլ մեղմութեամբ յորդորէ զայն, ինչպէս հօրդ պիտի ընէիր: Երիտասարդները եղբօրդ տեղը սեպէ, պառանները՝ մօրդ, իսկ երիտասարդուհիները քրոջդ տեղը դի՛ր եւ ամենայն մաքրութեամբ մօտեցի՛ր անոնց: Պատուէ՛ք եւ ինամէ՛ք այն այրիները որոնք իսկապէս որբեւայրի են: Իսկ երբ այրի մը գաւակներ ու թոռներ ունի, պէտք է անոնք նային իրեն, որպէսզի սորվին բարեպաշտութիւնը նախ տան մէջ կիրարկել՝ ծնողներէն իրենց տրուած ինամքին փոխարէն հոգ տանելով անոնց, որովհետեւ Աստուծոյ համար այդ է իրաւ եւ ընդունելի բարեպաշտութիւնը: Իսկական այրին ան է՝ որ մէկը չունի, յոյսը միայն Աստուծոյ վրայ դրած է եւ գիշեր-ցերեկ աղօթքով ու խնդրանքով կ'անցնէ իր ժամանակը:
ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԷՆ

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ
ԱԹԱՆԱՍ ՀԱՅՐԱՊԵՏ

Հռչականուն ախոյեան հաւատոյ Ս. Երրորդութեան՝ ընդդէմ Արիոսի, որ ուրացած էր Քրիստոսի աստուածութիւնը: Քրիստոնէայ բարեպաշտ ընտանիքի զաւակ, ծնաւ 295-ին Ադէքսանդրիոյ մէջ: Նոյն քաղաքին Ադէքսանդրոս հայրապետը, օր մը տեսնելով, որ անիկա դեռ մատաղ մանուկ, ծովեզերքը եպիսկոպոսի կերպ առած, մկրտութիւն եւ ձեռնադրութիւն կատարել կը ձեռնարկէ, հոգեւոր կոչումի նշան նկատեց իր այդ ընթացքը եւ զայն ընդունեց հայրապետանոցի մէջ ուր զարգացաւ շնորհալի փոքրիկը: Յետոյ սարկաւագ ձեռնադրուեցաւ անկէ եւ կարճ ժամանակի մէջ փայլեցաւ իր տաղանդով, աստուածաբանական խոր հմտութեամբ ու գրչի եւ խօսքի ձիրքերովը առարկայ դառնալով ամենուն ուշադրութեան: Սարկաւագ էր տակաւին, երբ ընկերակցելով իր Եպիսկոպոսին, Նիկիոյ Ժողովին մէջ պաշտպանեց ուղղափառ հաւատքը: Ադէքսանդրի յաջորդելէ ետք, իբրեւ պատրիարք Ադէքսանդրիոյ, իշխանութեամբ եւ աւելի ոգեւորուած ջանքով պայքարեցաւ աղանդամիտ հոսանքներու, մասնաւորապէս Արիանոսներու եւ Կիսարիանոսներու դէմ. եւ այդ պատճառաւ քանիցս ենթարկուեցաւ բուռն հակառակութեան, երբեմն ստիպուելով նոյնիսկ հեռանալ իր Աթոռէն: Մեռաւ 373-ին: Իր հօր վարդապետութիւնը եւ անհամեմատ կորովը արժանի դարձուցին զինքը նկատուելու Եկեղեցոյ ամենամեծ վարդապետներէն մին:

Իրաւամբ է, որ Ս. Գրիգոր Նազիանզացի կոչած է զայն «Սիւն Եկեղեցոյ»: Իր գրական երկերը, ամենքն ալ աստուածաբանական եւ ջատագովական, որոնցմէ կարեւոր մաս մը Ե. դարուն եւ յետոյ թարգմանուած են հայերէնի, եկեղեցական մատենագրութեան ամենէն թանկագին հարստութիւններէն կը համարուին իրաւամբ:

ԿԻՐԵՂ ՀԱՅՐԱՊԵՏ

Եգիպտացի ազնուական եւ բարեպաշտ ընտանիքէ, ազգական Թեոփիլոս պատրիարքին, որմէ ձեռնադրուեցաւ եւ 412-ին անոր յաջորդեց իբրեւ պատրիարք Ադէքսանդրիոյ: Վարդապետ Եկեղեցոյ եւ կորովի պաշտպան ուղղափառ հաւատքին. ինքն էր որ նախագահեց Եփեսոսի տիեզերական ժողովին, ջախջախեց Նեստորի հերետիկոսութիւնը եւ «միաւորեալ մի բնութիւն» բանաձեւովը, որ հիմն է Հայաստանեայց եկեղեցոյ դասնութեան, իր վերջին ճշդումին յանգեցուց քրիստոսաբանութիւնը: Այնքան եռանդուն հոգով ջանաց ջնջել հեթանոսութեան հետքերը Ադէքսանդրիոյ մէջ, որ յանիրաւի զրպարտուեցաւ իբրեւ պատճառ սպաննութեան Հիւպատիա իմաստասէր տիկնոջ: Հեղինակ է մեկնաբանական եւ աստուածաբանական բազմաթիւ գիրքերու, որոնցմէ շատերը հայերէնի թարգմանուած են մասամբ Ե. եւ մասամբ Ը. դարերուն Սիւնեաց Դպրոցի պատկանող մատենագիրներու միջոցաւ: Կիրեղ հայրապետ մեռաւ 444 թուականին:

Հայ Եկեղեցոյ տօնացոյցին համաձայն այս տարի Աթանաս եւ Կիրեղ հայրապետներու տօնը կը զուգադիպի Շարաֆ՝ 25 Յունուարին: